ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐ ՈՒԺ » ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2024

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը (այսուհետ նաև՝ Կուսակցություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

1.2. Կուսակցության կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), Օրենքին համապատասխան ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ (այսուհետ նաև՝ Կանոնադրություն):

1.3. Կուսակցության անվանումն է՝

հայերեն անվանումը՝ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցություն,

հայերեն անվանման հապավումը՝ ՆՈՒՌԿ

անգլերեն անվանումը՝ “New Power” Reformist Party

անգլերեն անվանման հապավումը՝ NPRP

ռուսերեն անվանումը՝ Реформистская партия «Новая Сила»

ռուսերեն անվանման հապավումը՝ РПНС

1.4. Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

1.5. Կուսակցության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կիևյան 30շ., 35բն.:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Կուսակցության անդամ կարող է լինել տասնութ տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով չի հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ և

ընդունում է Կուսակցության ծրագիրն ու Կանոնադրությունը, ծանոթ է դրանց դրույթներին:

2.2. Կուսակցության անդամ չեն կարող լինել Օրենքով և այլ օրենքներով կուսակցության անդամ լինելու իրավունք չունեցող անձինք:

2.3. Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, Կուսակցության վարչությանն ուղղված անձնական դիմումի հիման վրա:

2.4. Կուսակցությանն անդամակցության պայմաններն են՝

2.4.1. բացակայում են Կուսակցությանն անդամագրվելու օրենքով նախատեսված արգելքները,

2.4.2. դիմումատուն ծանոթ է Կուսակցության Կանոնադրությանը և ծրագրին,

2.4.3. դիմումատուն չի հանդիսանում այլ կուսակցության անդամ, բացակայում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված արգելքները՝ Դիմումատուին կուսակցություն ընդունելու համար:

2.5. Կուսակցությանն անդամագրության հարցը քննարկում և լուծում է Կուսակցության Վարչությունը: Կուսակցության վարչությունը իրավասու է դիմումի քննարկման համար հրավիրել դիմումատուին:

2.6. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կամ օրենքներով Կուսակցությանն անդամակցությունն անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է Կուսակցության անդամի դիմումի հիման վրա՝ Կուսակցության վարչության որոշմամբ:

2.7. Կուսակցությանն անդամությունը դադարեցվում է Կուսակցության վարչության որոշմամբ՝

2.7.1. Կուսակցության անդամի անձնական դիմումի համաձայն՝ Կուսակցությունից դուրս գալու դեպքում,

2.7.2. Կուսակցության լուծարման դեպքում,

2.7.3. Կուսակցությունից հեռացվելու դեպքում,

2.7.4. Կուսակցության անդամի մահվան դեպքում,

2.7.5. եթե անձը դադարել է համապատասխանել Կանոնադրությամբ սահմանված՝ Կուսակցության անդամին ներկայացվող պահանջներին:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կուսակցության անդամներն իրավունք ունեն՝

3.1.1. ընտրելու և ընտրվելու Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում,

3.1.2. ներկա լինելու Կուսակցության համագումարի նիստերին,

3.1.3. Կուսակցության մարմինների քննարկմանը ներկայացնելու հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ,

3.1.4. ծանոթանալու Կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալու Կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ,

3.1.5. ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կուսակցության Կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու Կուսակցության

ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը,

3.1.6. բողոքարկելու Կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները,

3.1.7. կամովին դադարեցնելու իրենց անդամակցությունը,

3.1.8. օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

3.2. Կուսակցության անդամը պարտավոր է՝

3.2.1. գործել Կուսակցության ծրագրի և Կանոնադրության շրջանակներում, չիրականացնել Կուսակցության ծրագրին կամ Կանոնադրությանը հակասող գործողություններ,

3.2.2. կատարել Կուսակցության համագումարի և Կուսակցության մարմինների որոշումները,

3.2.3. մասնակցել այն ժողովներին և նիստերին, որոնց հրավիրված է,

3.2.4. կատարել օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՔ ԿԻՐԱՌՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Իրենց կանոնադրական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կուսակցակության անդամները կարող են Կուսակցության վարչության կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցների՝

4.1.1. նկատողություն,

4.1.2. խիստ նկատողություն,

4.1.3. Կուսակցությունից հեռացում:

4.2. Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Կուսակցության վարչության նախագահը ընդգրկում է օրակարգում սեփական նախաձեռնությամբ կամ Կուսակցության ցանկացած անդամի գրավոր դիմումի հիման վրա:

4.3. Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու առթիվ հրավիրված Կուսակցության վարչության նիստին իրավունք ունի մասնակցելու Կուսակցության այն անդամը, որի վերաբերյալ քննվում է համապատասխան հարցը: Վերջինս իրավունք ունի տալ բացատրություններ և ներկայացնել փաստաթղթեր: Այդ հարցի քննության արդյունքում Կուսակցության վարչությունը կամ որոշում է կայացնում Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատության ենթարկելու վերաբերյալ՝ նշանակելով Կանոնադրության 4.1-ին կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության միջոցներից որևէ մեկը կամ որոշում է կայացնում Կուսակցության անդամի գործողություններում (անգործությունում) կարգապահական խախտման բացակայության մասին:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. Կուսակցության մարմիններն են՝

5.1.1. Կուսակցության համագումարը,

5.1.2. Կուսակցության վարչությունը,

5.1.3. Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովը:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

6.1. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը Կուսակցության համագումարն է, որը հրավիրում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը:

6.2. Կուսակցության համագումարն իրավասու է քննարկելու իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը Օրենքով կամ Կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

6.3. Կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններն են՝

6.3.1. Կուսակցության կանոնադրության հաստատումը և ծրագրի ընդունումը, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելը,

6.3.2. Կուսակցության Քաղաքական խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունը,

6.3.3. մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի՝ Կուսակցության վարչության նախագահի ընտրությունը,

6.3.4. Կուսակցության վերակազմակերպումը,

6.3.5. Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առաջին երեք տասնյակի հաստատումը, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների՝ երեք տասնյակի հաստատումը:

Ընդ որում, կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին մասում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

Ընդ որում թեկնածուների ցանկ կարող է առաջադրվել Կուսակցության առնվազն 50 (հիսուն) անդամի նախաձեռնությամբ, ինչպես նաև՝ վարչության որոշմամբ, իսկ առանձին թեկնածուներ կարող են առաջադրվել նաև կուսակցության ցանկացած անդամների կողմից: Հաստատված են համարվում այն 30 թեկնածուները, որոնք վարկանիշային քվեարկությամբ՝ ստացել են առավելագույն ձայները:

6.4. Համագումարը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Կուսակցության հերթական համագումարը հրավիրվում է երեք տարին մեկ անգամ:

6.5. Կուսակցության արտահերթ համագումար կարող է հրավիրվել Կուսակցության առնվազն 150 (հարյուր հիսուն) անդամի նախաձեռնությամբ, ինչպես նաև՝ վարչության որոշմամբ:

6.6. Կուսակցության վարչությունը համագումարի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ ՁԼՄ կամ տեղեկատվության տարածման կամ փոխանցման այլ եղանակներով (ներառյալ՝ էլեկտրոնային) տեղեկացնում է համագումարի օրվանից առնվազն 10 օր առաջ: Համագումարը նախագահում է Կուսակցության վարչության նախագահը: Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցելու

իրավունք ունի Կուսակցության յուրաքանչյուր անդամ, որը Կուսակցության վարչությանն համագումարի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ գրավոր ձևով տեղեկացնում է Կուսակցության համագումարին մասնակցելու իր ցանկության մասին:

6.7. Կուսակցության համագումարին մասնակցում են Կուսակցության համագումարի պատվիրակները, որոնք ընտրվում են Կուսակցության վարչության կողմից՝ նրա կողմից համագումարի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ կայացված որոշմամբ: Պատվիրակ կարող է ընտրվել բացառապես Կուսակցության անդամը:

Համագումարի մասնակիցները համագումարում քվեարկության դրվող բոլոր հարցերի քվեարկություններին մասնակցում են անձամբ:

Համագումարի բոլոր որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ եթե այլ կարգ նախատեսված չէ Կուսակցության վարչության որոշմամբ, բացառությամբ ղեկավար մարմինների ընտրությանը վերաբերվող հարցերի, որոնք ընդունվում են գաղտնի քվերակությամբ:

6.8. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա է կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

6.9. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ:

6.10. Կուսակցության կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

7.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը Կուսակցության վարչությունն է (այսուհետ՝ նաև Վարչություն):

7.2. Վարչության անդամը պարտավոր է մասնակցել Վարչության նիստերին:

7.3. Կուսակցության վարչությունը ձևավորվում և կազմալուծվում է Կուսակցության համագումարի որոշմամբ՝ երեք տարի ժամկետով: Կուսակցության համագումարում ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր մասնակից կարող է առաջարկել Կուսակցության համագումարի կողմից սահմանված թվաքանակով Վարչության անդամների թեկնածուների կազմ: Գաղտնի քվեարկությամբ հաղթած է համարվում համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը հավաքած թեկնածուների կազմը:

7.4. Կուսակցության Վարչության անդամը չի կարող լինել Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովի անդամ:

7.5. Կուսակցության Վարչությունը՝

7.5.1. հաստատում է Կուսակցության տարեկան բյուջեն,

7.5.2. հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է Կուսակցության ծախսերի նախահաշիվը,

7.5.3. Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ,

7.5.4. փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ պատճառներով

7.5.5. որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարն իրավազոր չի եղել.

7.5.6. հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև արտահերթ ընտրություններում՝ կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները:

Ձևավորում է Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանու անդամների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ առնվազն հաշվի են առնվում կուսակցությունների անդամների ներկայացրած առաջարկությունները:

Ընդ որում, կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկվում է ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին մասում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

Թեկնածուների ցանկը կարող է առաջադրվել Վարչության առնվազն երեք անդամի նախաձեռնությամբ՝ հաշվի առնելով նաև կուսակցությունների անդամների ներկայացրած առաջարկությունները: Հաստատված են համարվում այն թեկնածուները, որոնք վարկանիշային քվեարկությամբ՝ ստացել են առավելագույն ձայները:

7.5.7. իրականացնում է Օրենքով և Կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.6. Կուսակցության Վարչությունը իրավունք ունի համագումարին և Կուսակցության Վարչության Նախագահին ներկայացնել Կուսակցության ցանկացած մարմնի աշխատանքների բարելավմանն ուղղված առաջարկություններ:

7.7. Վարչության նիստերի արդյունքներն ամփոփվում են արձանագրության մեջ, որն ստորագրվում է Վարչության Նախագահի կողմից:

7.8. Վարչության նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Վարչության անդամների կեսից ավելին: Վարչության նիստի ժամանակ հարցերն ընդունվում են

բաց քվեարկությամբ: Վարչության որոշումները ընդունվում են Վարչության նիստին մասնակցող Վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Վարչության Նախագահի ձայնը վճռորոշ է: Վարչության նիստերը փակ են:

7.9. Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինը Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովն է (այսուհետ՝ նաև Վերահսկիչ հանձնաժողով), որը ձևավորվում և կազմալուծվում է Կուսակցության համագումարի որոշմամբ՝ երեք տարի ժամկետով: Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովն ընտրվում է Կուսակցության համագումարի կողմից՝ համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանում է Կուսակցության համագումարը: Կուսակցության համագումարում ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր մասնակից կարող է առաջարկել Կուսակցության համագումարի կողմից սահմանված թվաքանակով Վերահսկիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների կազմ: Գաղտնի քվեարկությամբ հաղթած է համարվում համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը հավաքած թեկնածուների կազմը:

7.10. Վերահսկիչ հանձնաժողովի նիստերի արդյունքներն ամփոփվում են արձանագրության մեջ, որն ստորագրվում է Վերահսկիչ հանձնաժողովի Նախագահի կողմից:

7.11. Վերահսկիչ հանձնաժողովի նիստն իրավազոր է միայն հանձնաժողովի անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Վերահսկիչ հանձնաժողովի նիստի ժամանակ հարցերն ընդունվում են բաց քվեարկությամբ: Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը փակ են:

7.12. Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է՝

7.12.1. Կուսակցության Վարչության հանձնարարությամբ քննարկել Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը և կարծիք ներկայացնել Կուսակցության Վարչությանն,

7.12.2. վերահսկողություն իրականացնել Կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ,

7.12.3. Կուսակցության Վարչության առաջարկությամբ ստուգել Կուսակցության գույքի հետ կապված գործընթացները,

7.12.4. կատարել Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

7.13. Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովը Կանոնադրության 7.12.2-րդ և 7.12.3-րդ կետերով նախատեսված պարտականությունների կատարման արդյունքում իրավունք ունի Կուսակցության վարչությանն առաջարկություններ ներկայացնել Կուսակցության ֆինանսական գործունեության և գույքի հետ կապված գործընթացների բարելավման ուղղությամբ: Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովն օգտվում է Օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

7.14. Կուսակցության վերահսկիչ հանձաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

8.1. Կուսակցության վարչության նախագահը ընտրվում է համագումարի կողմից՝ երեք տարի ժամկետով՝ համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի

քվեարկությամբ: Կուսակցության վարչության նախագահի թեկնածություններն առաջադրվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների կողմից՝ Կուսակցության վարչության կազմից:

8.2. Կուսակցության վարչության նախագահն իրականացնում է բոլոր այն լիազորությունները, որոնք Օրենքով կամ Կանոնադրությամբ վերապահված չեն Կուսակցության այլ մարմիններին:

8.3. Բացի Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններից՝ վարչության նախագահը՝

8.3.1. ներկայացնում է Կուսակցությունը

8.3.2. հրավիրում և վարում է Կուսակցության վարչության նիստերը,

8.3.3. գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագիր.

8.3.4. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր

8.3.5. ընդունում է որոշում Կուսակցության բնականոն գործունեությունն ապահովելուն առնչվող հարցի վերաբերյալ

8.3.6. նշանակում և ազատում է Կուսակցության աշխատակազմի աշխատողներին.

8.3.7. սահմանում է Կուսակցության աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների շրջանակը.

8.3.8. Կուսակցության անունից հանդես է գալիս այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում կամ այդ նպատակով լիազորում է Կուսակցության վարչության այլ անդամի,

8.3.9. Կուսակցության անունից ստորագրում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

9. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9.1. Կանոնադրությունում և Կուսակցության ծրագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կուսակցության համագումարի կողմից:

9.2. Կուսակցության համագումարին Կանոնադրությունում և Կուսակցության ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծը ներկայացվում է Կուսակցության վարչության կողմից: